

1880—1890

Եթէ ըստ մեծի մասին ա՛յդ ընթացքով չարունակէ՝ յովտ մը անգամ չարժեր: Հետաքրքիրներէն անոնք, որ Ս. Գիրքին կարեւորութիւն տալու մը աստիճան երկիւղած ալ են, թող կարդան մոլի և ամբարտաւան վաճառականութեան վրայ Եսայիի մարգարէական պատգամները՝ մանաւանդ ԻԳ. զլուխին մէջ, նմանապէս Եղեկիէլի ԻԷ. ԻԸ. զլուխները՝ Ողբի ի վերայ Ծուրայ եւ ի վերայ Իշխանի Ծուրայ: Վաճառականութիւնը, մանաւանդ այդ մակարոյծներէն զերծ վաճառականութիւնը, կըրնայ տալ մեծ դիւրութիւններ ընկերական ցուոց մեղմացումին, բարի ու խաղաղ յարաբերութեանց, հանգիստ և պատուաւոր կեանքի, գիտութեանց և բարոյից զարգացման: Վաճառականութիւնը, մանաւանդ մանիֆաթուրայի արդա՛ր վաճառականութիւնն՝ երկրագործութենէն ետք՝ առաջին ազնիւ ու ազնուացուցիչ արհեստն էր մեր բարի նախնեաց, նահապետաց: Վաճառակա՛ն էին Արրահամ, Յակոբ, Յովսէփ և Յօր, և ա՛տ՝ արգելք մը չեղաւ իրենց միանգամայն ըլլալու գիտութեանց, տանուտիրական մեծութեանց, տոհմային նահապետութեանց, իշխանական ազնուականութեանց և տէպար արդարութեան ու համբերութեան ռանձկիրաներ, աստուածպաշտութեան և տոհմասիրութեան աստղեր: Հիներուն ամէնէն ազնուական իմաստասէրը, Պղատոն, որ երբեմն ոսկին ու առաքինութիւնն իրարու հետ հա-